

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2744

Պ. ԽՈՐԴԻԱՆԻ ՀԱՅԱԳԵՑՈՒԹՅՈՒՆ  
Պատմութեան բանը յարկանիք, միացեց.

Ա. ՍՈՒՄԱՆԻ

# Կենին

ՆՐԱ ԿՅԱՆՔՆ

ՈՒ

ԳՈՐԾԵ



31<26  
Մ-93



ԽՈՐԴԻԱՆԻ ՀԱՅԱԳԵՑՈՒԹՅՈՒՆ Հ. 207.

08 JUN 2005

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀԾԻ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարներ բուլոր յերկրների, միացե՛ք.

441

3K26

15-93  
380

1507-50.

Ա. ՄԻԱՎՅԱՆ

20 NOV 2005



# ԼԵՆԻՆ

ՆՐԱ ԿՅԱՆՔԸ ՅԵՎ ԳՈՐԾԸ

1903  
19195



ՊԵՏՐՈՎ


№ 207

1925.

2744

Տիրաժ 10,000

Պետհրատի յերկրորդ տպարան Յերևանում:



Լ. հ. Լենին

(ծն. 22 սուբիլի 1870 թ.—մարտ, 21 հունվարի 1924 թ.)

104. 07. 2013

Վլաղիմիր Իլյիչ Ուլյանով-Լենինը ծնվել ե  
Վոլգայի վրա գտնվող Սիմբիրսկ (այժմ կոչվում  
է Լենինսկ) քաղաքում, 1870 թ. ապրիլի 22-ին։  
Նրա հայր Իլյա Ուլյանովը ժողովրդական դրա-  
րոցների տեսուչ եր, ժողովրդասեր մի մարդ։  
Իր զավակներին նա կրթում եր ժողովրդին սի-  
րելու վոգով։ Լենինի մեծ յեղայր Ալեքսանդրը  
տաղանդավոր ուսանող եր, վորը Պետերբուրգում  
ուսումնասիրում եր քիմիական գիտություններ։  
1887 թ. Ալեքսանդր Ուլյանովը անհաջող մահա-  
փորձ կատարեց բռնակալ կայսր Ալեքսանդր Յեր-  
բորդի դեմ, ձերբակալվեց և ընկերների հետ  
միասին կախաղան հանվեց։ 17 տարեկան Վլա-  
ղիմիր Ուլյանովին իր մեծ յեղայր կատարած  
հեղափոխական գործի համար բանա ձգեցին և  
ուզում եյին արտաքսել դպրոցից։ Ալեքսանդրի  
վողբերգական մահը կախաղանի վրա հանուն հե-  
ղափոխական խորապես ազգեց յերիտասարդ  
Վլաղիմիր Ուլյանովի վրա և գծեց նրա կյանքի  
ուղին, նա դարձավ հեղափոխության գինվոր։

Այս գեղքից քիչ հետո ընկ. Լենինը փայ-  
լուն կերպով ավարտեց միջնակարգ դպրոցը և  
մտավ Կազանի համալսարանը։ Այստեղ նա սկսեց

մասնակցել հեղափոխական ուսանողների գաղտնի խմբակներին, նրանց հետ միասին կազմակերպեց ուսանողական ցույց կառավարության դեմ, ձերքակալվեց, արտաքսվեց համալսարանից և աքսորվեց Սիմբիրսկ:

Շուտով ընկ. Լենինն անցավ Պետերբուրգ։ Այստեղ նա սկսեց լուրջ կեպով ուսումնասիրել գիտական սոցիալիզմի մեծ ուսուցիչներ կարլ Մարքսի և Ֆրիդրիխ Ենգելսի ուսմունքը։ Շնորհիվ իր փայլուն մտավոր ընդունակությունների և զարմանալի աշխատասիրության ընկ. Լենինը կարճ ժամանակում խորը կերպով յուրացրեց Մարքս-Ենգելսի ուսմունքը։ Զինված հեղափոխական այդ գիտությամբ նա յեռանդուն աշխատանքի գիմեց Պետերբուրգի (այժմ Լենինգրադ) բանվորության մեջ։

Այդ 1893—94 տարիներն եր։ Պետերբուրգի բանվորները դեռ զուրկ եյին գասակարգային գիտակցությունից, չունեյին վոչ քաղաքական, վոչ ել պրոֆեսիոնալ կազմակերպություններ։ Անարդ միավետությունն ու բուրժուազիան ձեռքձեռքի տված անխղճորհն շահագործում եյին բանվորներին և ձնշում գիտակցության ու հեղափոխական արթնացման ամեն մի նշան։ Ընկ. Լենինը մի քանի ընկերների հետ ոկտոմբեն են գաղտնի աշխատանք բանվորների մեջ և մեծ դժվա-

րություններ հաղթահարելով հիմնադրում բանվորական կուսակցական կազմակերպություն, վորի վոգին ընկ. Լենինն եր։ Բայց շուտով ցարի վոստիկանությունը ձերբակալում է ընկ. Լենինին և աքսորում Սիբիր։ Լենինի յերկաթե կամքը չի ընկճվում աքսորում, այստեղ նա շարունակում է ուսումնասիրել մարքսիզմը և մի շատ կարևոր գիրք և գրում Ռուսաստանի տնտեսական զարգացման մասին։ Միաժամանակ ընկ. Լենինը հեղափոխական-կազմակերպչական աշխատանք է կատարում աքսորականների և տեղական գյուղացիների մեջ։

1899 թվին Լենինը Սիբիրից վերադառնում է Ռուսաստան ու կարճ ժամանակ անլեզալ աշխատանք կատարում և ապա անցնում արտասահման։ Այստեղ նա Պլեխանովի և մի քանի ուրիշ ընկերների հետ հիմնում է «Կայծ» («Կայծ») հայտնի թերթը, վորը մեծապես նպաստեց կուսակցության կազմակերպման գործին։ 1903 թվին կայացավ կուսակցության 2-րդ համագումարը, վորտեղ պառակտում և առաջանում։ Համագումարի մեջ... մատնությունը անցնում է Լենինի կողմը, վորն առում եր, թե սկսվող հեղափոխության մեջ բանվոր գասակարգը պիտի հավատամիայն իր ուժերին և աշխատի իր կողմը քաշել գյուղացիներին։ Լենինն առում եր, վոր բուրժուազիան լոկ խոսքով և հեղափոխական և կար-

միը բառերով միայն խարում ե բանվորությանը: Բոլորպին հակառակ կարծիք եր պաշտպանում համագումարի փոքրամասնությունը, վորը բանվոր դասակարգին յենթարկում եր բուրժուազիայի աղղեցությանը: Այստեղից ել առաջացան մեծամասնականները (բայլշեիկները) և փոքրամասնականները (մենշևիկներ):

Շուտով սկսեց 1905 թվի հեղափոխությունը, Նրա փորձը ցույց տվեց, վոր բայլշեիկների ուղղությունը ճիշտ ե: 1905—6—7 տարիներին կատարված հեղափոխական մեծ անցքերի գլխավոր ղեկավարը բայլշեիկյան կուսակցությունն եր ընկ. Լենինի առաջնորդությամբ: Այդ տարիներին Լենինի ջանքերով վերջնականապես հրզկվում, ամրանում ե բայլշեիկյան կուսակցությունը: Լենինն ասում եր, վոր բանվոր դասակարգը չկարող հաջող կռվել, և հաղթել, առանց կուսակցության, վորը պետք ե յերկաթե ամրություն ունենա: Ու Լենինը անընդհատ աշխատելով կառուցում եր բայլշեիկյան կուսակցությունը:

Սկսվեց ցարական ռեակցիան:

1905—07 թվի հեղափոխությունը հաղթվեց: Իրենց սոցիալիստական անվանող շատ ուրիշ կուսակցություններ ծալեցին և մի կողմը՝ դրին իրենց հեղափոխական ծրագիրը, կարմիր պոշակը: Միայն բայլշեիկյան կուսակցությունն եր, վոր

հավատարիմ մնաց 1905 թվի հեղափոխությանը և շարունակում եր իր գործը: Բանվորների ու գյուղացիների համար շատ մութ 1908, 09, 10, 11 տարիներին ընկ. Լենինը շարունակ քարոզությունը, պետք ե ամուր պահել կուսակցությունը, պետք ե կազմակերպել բանվորներին ու գյուղացիներին հեղափոխական նոր կոփմների համար: 1912 թվին բանվորական նոր շարժում առաջացավ և ընկ. Լենինի առաջնորդությամբ մեր կուսակցությունը կազմակերպեց հակայական գործադրուներ և հեղափոխական մեծ ցույցեր:

1914 թվի ոգոսատոին սկսվեց մեծ պատերազմը: Խուսաստանի բուրժուազիան (նրա թը-վում և հայ բուրժուաները) և Արևմտյան Յելլոպայի բուրժուազիան ժողովրդներին զցեցին արյան ծովի մեջ: Զանազան յերկրների բանվորներն ու գյուղացիները կոտորում եյին մեկ-մեկու կուրորեն հետևելով իրենց բուրժուական կառավարությունների հրամաններին: Մենշևիկները, դաշնակցականները և բոլոր մյուս տեսակի սոցիալիստները ոգնում եյին «հայրենի» բուրժուազիային՝ բանվորներին ու գյուղացիներին խաբելու սարք գործում: Այդ շատ ծանր որերին ընկ. Լենինը նետեց իր հոչակավոր լոգունդը՝ «Իմպերիալիստական կովկը դարձնել քաղաքացիական պատերազմ, զենքերը դարձնել «հայրենի» բուր-

ժուազիայի դեմ»։ Պատերազմի ամբողջ ընթացքում բայլշկիլյան կուսակցությունը բանվորների, գյուղացիների ու զինվորների մեջ անընդհատ տանում եր հեղափոխական-կազմակերպչական աշխատանք։

«Խաղաղություն խրճիթներին, պատերազմ պալատներին, կորչի իմպերիալիստական պատերազմը, կեցցե սոցիալիստական հեղափոխությունը», այս եր քարոզում ընկ. Լենինը։

Յեվ յերբ 1917 թ. մարտին նորից վորոտաց հեղափոխությունը՝ Լենինի կառուցած բայլշկիլյան կուսակցությունը իր մարտական դիրքերումն եր։ Լենինը վերադարձավ արտասահմանից և տեսդու աշխատանքի դիմեց։ Մենշևիկների և սոցիալիստ-հեղափոխականների ձեռքին խաղալիք դարձած հեղափոխությունը վտանգի մեջ եր։ Ընկեր Լենինը բանվորներին և գյուղացիներին լողունդ տվեց՝ «տապալել բուրժուական ժամանակավոր կառավարությունը և ամբողջ իշխանությունը վերցնել Բանվորների, Զինվորների և Գյուղացիների Պատգամավորական Խորհրդի ձեռքը։» Այդ անհրաժեշտ եր, վորպեսզի կարելի լիներ վերջ տալ արյունահեղ պատերազմին, հողը հանձնել գյուղացիներին, գործարանները խլել կապիտալիստների ձեռքից և տալ Բանվորա-Դյուղացիական կառավարության ձեռքը։

Բանվոր դասակարգը լսեց բալշկիլյան կուսակցության ու նրա առաջնորդ Լենինի ձայնը և գնաց նրա հետեւից։ 1917 թ. հոկտեմբերի 25-ին (նոր տոմարով նոյեմբերի 7-ին) Պետերբուրգի բանվորներն ու զինվորները բալշկիլների ղեկավարությամբ կատարեցին Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը։ Կազմվեց Խորհրդագյին կառավարությունը ընկ. Լենինի նախագահությամբ և Խորհրդագյին իշխանությունը կատարեց իր խոստումը՝ վերջացրեց պատերազմը, ամբողջ հողը ձրիաբար հանձնեց գյուղացիներին և բուրժուաների ձեռքից խլելով բանկերը, գործարանները, յերկաթուղիները—այդ բոլորը դարձեց բանվորա-գյուղացիական պետության սեփականություն։

Կապիտալիստական պետությունները մեր բանվորա-գյուղացիական առաջին հանրապետության դեմ սկսեցին կատաղի կոփի։ Ամբողջ յերեք տարի նրանք պատերազմ մղեցին խորհրդագյին կառավարության դեմ—բայց անհաջող։ Կարմիր բանակը ջարդեց, խորտակեց անզու-ֆրանսական կապիտալի ծառա Դենի և Ին, Վրանգելին, Կոլչակին և 1920 թվին հաստատեց խաղաղությունը ու աշխատանք։ Կոփի այդ ծանր տարիներին միշտ իր գիրքերումն եր ընկ. Լենինը, մեր կառավարության և կոմունիստական կուսակցության իմաստուն առաջնորդը։

1922 թվին յերեսուն: տարվա հեղափոխական անդադար աշխատանքից հետո ընկ. Լենինը հիմնդացավ ծանր կերպով: Մոտ 2 տարի նա մաքառեց հիմնդության գեմ և հանդավ 1924 թ. հունվարի 21-ին:

Բայց ընկ. Լենինը թողեց մեծ հիշատակ, անչնչելի ժառանգություն:

Ընկ. Լենինը թողել ե պողպատից ձուլած կոմունիստական կուսակցությունը, վորն այժմ ունի 700 հազար անդամ և թեկնածու: Մեր կուսակցությունը հավատարիմ իր մեծ ուսուցչի թողած ավանդներին, հաջողությամբ շարունակում ե բանվորա-գյուղացիական հեղափոխության գործը:

Ընկեր Լենինի մահվան ազգեցությամբ կոմունիստական կուսակցության մեջ մտան նոր 128 հազար բանվորներ: Ամբողջ կուսակցությունը այս մի տարվա ընթացքում մեծ յեռանդով ուսումնակրում եր լենինիզմը, Լենինի թողած այդ ամենասուր զենքը:

Լենինիզմը լուսավորում է Խորհրդային Միության 130 միլիոն բանվորների և գյուղացիների կովի ու աշխատանքի ծանր ճանապարհը:

Ընկ. Լենինի անմիջական ղեկավարությամբ

և ծանրագույն ջանքերով կազմակերպված խորհրդային կառավարությունը լենինից հետո մնում ե ամուր, անխոցելի, քանի վոր նրա հիմքը դըրված ե բանվորների և գյուղացիների կուռ միության վրա:

Այս անցած տարվա ընթացքում բոլորովին չթուլացավ, այլ ավելի ամրացավ բանվոր դասակարգի և գյուղացիների շաղկառը: Կոմունիստական կուսակցությունը և խորհրդային իշխանությունը իրենց ամբողջ յերեսը դարձրել են դեպի գյուղը: Լարված, մեծ աշխատանք ե կատարվում աղքատ և միջակ գյուղացիների տընտեսությունները բարձրացնելու, կույլտուրական դարձնելու համար: Գործարանային արդյունաբերության ապրանքները եժանացվել և շատացել են գյուղի համար, կոոպերացիան մեծ հաջողություն ունի գյուղում: Ընկ. Լենինի մահվան առաջին տարեղարձի որերին ամբողջ Խորհրդային Միության մեջ (մեզ մոտ Հայաստանում եր) կատարվում են գյուղական խորհուրդների ընտրություն և ամեն տեղ աղքատ ու միջակ գյուղացիք մեծ յեռանդով մասնակցում են այդ ընտրություններին: Խորհրդային իշխանությունը անընդհատ ուժեղանում ե գյուղում, նրա հիմքերը ավելի ու ավելի խորանում են:

Միջազգային բուրժուազիան այս վերջին տարվա ընթացքում մի շարք զիջումներ արակ Խորհրդային Միությանը: Անգլիան, Իտալիան ու Ֆրանսիան ճանաչեցին խորհուրդների իշխանությունը:

Բայց գեռ ուժեղ ե կապիտալիստական աշխարհը և նա թունավոր ատամներ ունի բանվորների ու գյուղացիների խորհրդային իշխանության գեմ: Այդ վտանգից մեր խորհրդային աշխարհը վերջնականապես կազատվի միայն այն ժամանակ, յերբ բուրժուական Յեվրոպայի և Արևելքի բանվորներն ու գյուղացիները կը կատարեն իրենց խորհրդային հեղափոխությունը:


Միջազգային հեղափոխության պատրաստման գործի վրա յե աշխատում կոմունիստական ինստերնացիոնալը, վորի հիմնադիրն ե ը. Լենինը: Կոմունիստական ինստերնացիոնալը լենինիզմի, հեղափոխական կազմակերպչական աշխատանքի ձեւվերը սովորեցնում ե կապիտալիստական աշխարհի բանվորներին ու գաղութների աշխատավորներին, բայց նրանց և պատրաստում մտնիկ ապագայում կատարելու հեղափոխություն:

Խորհրդային Միության բանվորների ու գյուղացիների որինակին հետևելով, բուրժուական Յեվրոպայի, Ամերիկայի բանվորները և Ասիա-

յի ու Աֆրիկայի գաղութային յերկրների գյուղացիները պիտի կատարեն իրենց հոկտեմբերյան հեղափոխությունը Լենինի գծած ուղիներով:  
Յեկ այդ կյենի ընկ. Լենինի գաղափարների հաղթանակը ամբողջ աշխարհում:



ՀՀ Ազգային գրադարան



3

150

ԳԻՆԸ 8 ԿՈՊ.